Պրոֆեսոր Կարին Մարկիդեսը հրաժեշտ տվեց Հայաստանի ամերիկյան համալսարանին

Դեկտեմբերի 3-ին՝ Հայաստանի ամերիկյան համալսարանում (ՀԱՀ) 3,5 տարի նախագահելուց հետո, պրոֆեսոր Կարին Մարկիդեսը հրաժեշտ տվեց համալսարանին: ՀԱՀ Հոգաբարձուների խորհուրդը և ՀԱՀ Հիմնադրամի անդամներն իրենց երախտագիտությունը հայտնեցին պրոֆեսոր Մարկիդեսին՝ Հայաստանի համար բարդ շրջանում համալսարանի հանդեպ վերջինիս նվիրվածության և անմնացորդ աշխատանքի համար՝ հաջողություն մաղթելով նրան իր հետագա գործունեության ընթացքում:

Պրոֆեսոր Մարկիդեսի՝ որպես ՀԱՀ հինգերորդ նախագահի ղեկավարման ժամանակահատվածում հաստատությունը կյանքի է կոչել կարևոր և ռազմավարական փոփոխություններ: Այս տարիների ընթացքում էապես աճել է բակալավրի ուսանողների ներգրավվածությունը, ավելացել են նոր ակադեմիական ծրագրեր, ինչպես նաև ընդլայնվել է ՀԱՀ դասախոսական անձնակազմը:

Համալսարանական համայնքին ուղղված իր հրաժեշտի նամակում Մարկիդսեը նշում է.«Ինձ համար պատիվ էր աշխատել ՀԱՀ նախագահի պաշտոնում, և ես վստահ եմ որ

դուք կօգտվեք մեր կողմից ձեզ ընձեռված հնարավորություններից՝ դարձնելու ՀԱՀ-ն առավել ազդեցիկ միջազգային ասպարեզում: Ես ընտրությամբ հայ եմ և պատրաստ եմ մշտապես օժանդակել համալսարանին և դառնալ ձեր դեսպանը»: Պրոֆեսոր Մարկիդեսի պաշտոնավարման ընթացքում ՀԱՀ-ը ստորագրել է նոր աշխատանքային համաձայնագրեր և հաստատել է համագործակցություններ միջազգային ընկերությունների, պետական մարմինների և համալսարանների հետ՝ Հայաստանում, Միացյալ Նահանգներում և Եվրոպայում: Չնայած COVID-19 համաճարակի և Արցախյան 44-օրյա պատերազմի պատճառով առաջացած մարտահրավերներին, նրա ղեկավարման ընթացքում համալսարանն ունեցել է բազմաթիվ ձեռքբերումներ:

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝
https://www.aravot.am/2022/12/07/1309478/

© 1998 - 2022 Առավոտ – Լուրեր Հայաստանից